Արձանագրություն N 2

**N <<ԷԷՀՕ-ՊԸԱՇՁԲ-08/16-16>>**
**Ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

11 օգոստոսի 2016թ
ժ.12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Մնացականյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ.Մարկոսյան, Ա.Հայրապետյան, Ա. Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Պողոսյան(համակարգող)

---

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Աբովյան 27:

2. Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները
N << ԷԷՀՕ-ՊԸԱՇՁԲ-08/16-16>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտ են ներկայացրել
2.1 **<<Գեղամա ԷՑՇ>>** ՍՊԸ,ք.Սևան,Գրիբոյեդովի 5/11, հեռ. 060-542-543,094-071-031, էլեկտրոնային փոստ՝ geghamaecsh@mail.ru,
2.2 11.08.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

**3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

3.1 **<<Գեղամա ԷՑՇ>>** ՍՊԸ -ի կողմից գնման ընթացակարգին ներկայացված փակ, կնքված ծրարներում ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են բնօրինակից և 1 օրինակ պատճենից:

3.2 **<<Գեղամա ԷՑՇ>>** ՍՊԸ -ի կողմից գնման ընթացակարգին ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժին 1՝ <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի կարիքների համար <<Բարձրավոլտ էլեկտրացանցեր>> ՓԲԸ-ի Աշնակ-1, Աշնակ-2, Անի 220 ԿՎ. լարման օդային գծերի բարձր հաճախականային կապուղիների (PLC) սարքավորումների կարգաբերման աշխատանքների կատարման>>

| **Մասնակցի անվանումը** | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ | Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ | Նախահաշվային գինը |
|---|---|---|---|
| | Չ/Հ1 | **Չ/Հ1** | |
| **<<Գեղամա ԷՑՇ>> ՍՊԸ** | 5432340 | 6518808 | 7000000 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0*

***5.Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.***

*5.1* **N << ԷԷՀՕ-ՊԸԱՇՁԲ-08/16-16>>** ծածկագրով ընթացակարգի 1 չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում **<<Գեղամա ԷՑՇ>> ՍՊԸ** -Ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

*5.2* N << ԷԷՀՕ-ՊԸԱՇՁԲ-08/16-16>> ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշների և տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, և հաղթող մասնակցին որոշելու համար կիրավիրվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացությունը ստանալուց և մասնակիցների կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0*

***6 Շահերի բախման բացակայության մասին***

N <<ԷԷՀՕ-ՊԸԱՇՁԲ-08/16-16>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում է, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունի շահերի բախում:

***Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:***

**Հանձնաժողովի**

| | |
|---|---|
| **Նախագահ՝** | Մ.Մնացականյան |
| **Անդամներ՝** | Հ.Մարկոսյան |
| | Ա.Հայրապետյան |
| | Ա. Հակոբյան |
| **Քարտուղար՝** | Մ.Պողոսյան |